

ԼԵՈՆԱՄԵՐՉ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ

« 18 » հունվարի 2017թ.

գ. Լեոնամերձ

Հարգելի Լեոնամերձ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2016թ.-ի տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին . Կերջում կլինի հարց ու պատասխան Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2016 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 1322,4 հազար դրամ գումար , որը կազմում է 2016 թվականի տարեկան կատարողականի 76,4% -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 410.7 հազար դրամ

բ/ Գուլքահարկ հավաքագրվել է 507 5 հազար դրամ

գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 90 7 հազար դրամ

դ/ Պետության կողմից դոտացյա 9513.7 հազար դրամ

ե/ տեղական տուրքեր 52,8 հազար դրամ

զ/ մատուցվող ծառայությունների դիմաց 260.7 հազար դրամ.

Համայնքում սեփական եկամուտների տոկոսը կազմում է 76 4% որը բավարար ցուցանիշ է:

Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները Համայնքի բնակիչներին գյուղապետարանի աշխատանքների մասին իրազեկելու համար համայնքում տեղադրված թվով 1 ցուցատախտակների վրա փակցվել են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները և ավագանու որոշումները:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

2. Պաշտպանության բնագավառում

Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչճից խուսափոխ թվով 6 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Համայնքում կան տներ, որոնց սեսնակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակութային հողերը՝ 2016թվականի առաջի կիսամյակի ընթացքում համայնքի բնակչությանը տրամադրվել է ազոտական պարատանույթ մեկ պարկը 6000դրամ: Հաշվառվել է բնակչությանը պատկանող անասունների և թռչունների գլխաքանակը:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը, քայց տարվում են աշխատանքներ գյուղամիջյան ճանապարհը որի երկարությունը 1 կմ է ընդգրկել որևէ ծրագրի մեջ, որպիսի կառուցվի .

6. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ:
ա/ բուժկետից օգտվել են՝ 486 բնակիչներ
բ/ տնային կանչեր 165

գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 38 այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար

դ/ 2016 թվականի առաջի կիսամյակի ընթացքում ծնվել են 5 երեխաներ
Բուժ կետի աշխատանքները համարում են բավարար, չկան բողոքներ.

7. 2016 թվականի բյուջե

2016 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ ծրագրերը

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 10884.9 հազար դրամ
2. Աղբահանություն 360,0 հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Համայնքի գազաֆիկացում
3. Փոստի շենքի բացակայություն
4. Գյուղապետարանի շենքի բացակայություն
5. 1 կմ համայնքային ճանապարհի կառուցում

Համայնքի ղեկավար՝



Վ. Միրզոյան